նայ նոր ծանօթութիւններ ընծայել՝ Լեհահայոց գաղթականութեան գիտելիքն ամբողջացընել ուզողին, որ չէր մեր նպատակն, այլ ամփոփել ուր որ ձեռնհաս էինք, և ինչ որ չէր հրատարակուած ի Ճանապարհագրութեան Բժշկեան Հ. Մինասայ. ուր, ինչպէս քանի մ'անգամ յիշած եմք, կարեւոր գրուածոց հետ կան և քանի մի Ձեռագրաց յիշատակարանք։

Թ. Վիպասանութիւն Նիկոլական, (եր. 202–14). գուցէ մեր հրատարակած Յաւելուածոց մէջ՝ սա ամենէն հետաքննականն ըլլայ՝ ոմանց, և փափագելի՝ գրուածին սկզբան և վերջին պակաս մասերը գտնելու։ Տես և ըսածնիս ի ծանօթութեան, եր. 202։

Ժ. Կոնդակք Կաթողիկոսաց առ Լեհահայս (եր. 215–65). անշուշտ շատոց այլ՝ այս Յաւելուածս աւելի յարգի է. 300 տարիներում (1365–1672) մեր կաթողիկոսաց իշխանութիւնն և խնամքը, միանգամայն և կոնդակագրութեան ոճը յայտնողք։ Կոնդակաց առաջինն և երկրորդն՝ ի սկզբան գրոցս հրատարակուած են, երբ չէինք մտադրած այս Յաւելուածները հաւաքել. վասն որոյ Գ թուէն սկսի այս տեղ հաւաքած շարքն՝ մինչեւ ց'ԺԸ. որոց մէջ կայ և թուղթ մի (Ը) Աստուածատրոյ պատրիարքի Կ. Պոլսի առ Լեհահայս. թուղթ մի եւս (Է) Լովացւոց առ Միքայէլ կաթողիկոս, յորմէ խնդրեն իրենց սակաւաթիւ ընտանեաց համար՝ անօրինումն մերձաւոր ամուսնութեանց։ Ինչպէս ձեռագիր յիշատակարանաց համար ըսինք, այսպէս և անշուշտ դեռ ուրիշ Կոնդակք և փոխադարձ թղթակցութիւնք եղած են Կաթողիկոսաց և Լեհահայոց, որոց գոնէ ոմանց պատճէնը խնդրելու է յիշմիածին։ Մեր հրատարակելոց կէսն (ինն) Նիկոլի խնդրոյն վրայօք է. բովանդակն այս է ժամանակի կարգաւ.

Ա.	1365, յանուար.	Մեսրովպ կաթող. առ Լեհահայս.		երես	5
Բ.	1375, յան. 15.	Կոստանդին կաթող.	»	» 8 և	215
Գ.	1384, ապրիլ 2.	Թէոդորոս »	»	»	217
Դ.	1390, օգոստ. 18.	Նոյն »	»	»	9
Ե.	1390, յունիս 28.	Յակովբ Գ »	»	»	221
Զ.	1457–60	Արիստակէս »	»	»	225
Է.	1572, ապրիլ 15.	Թուղթ Հայոց Լովի առ Միքայէլ կաթող.		»	228
Ը.	1589, նոյեմբ. 8.	Թուղթ Աստուածատրոյ պատրիարքի վասն Ծռագատկին.		»	231
Թ.	1611, մայիս 1.	Մելքիսեդ կաթող. առ Լեհահայս.		»	238
Ժ.	1633, օգոս. 30.	Մովսէս կթ. առ Վլատիսլաւ թգ. Լեհաց.		»	241
ԺԱ.	1640, հոկտ. 12.	Փիլիպպոս կթղ. առ Լեհահայս		»	244
ԺԲ.	1644, յուլ. 27.	Նոյն առ Վլատիսլաւ թագաւոր.		»	247
ԺԳ.	1653, նոյեմբ. 5.	Նոյն առ Լեհահայս.	»	»	250